

# ՖԱՆԱՍԻՐԱԿԱՆ

## Ա. ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՆԴՐԱՆԻԿ ԿՐԻԴԱԿԻ

ԶԱՐՄԱՆԿԱՐՉՈՒԹԻՒՆԸ.

Ա. Հայրապետի անդրանիկ կոնդակը պատրաստ էր և կարող էր սեպտեմբերի կէսերին՝ օծումից անմիջապէս յետոյ՝ հրատարակուել. բայց միտք յղացուեց հին կոնդակների նման զարդարել այն վայելուչ ձևով և ապա հրատարակել: Ն. Սրբութիւնը այդ գործի իրագործումը յանձնեց նուաստիս: Այս նպատակի համար հրաւիրուեցաւ նկարիչ Սիմէռն Նիկոլայեվիչ Պոլտարացկին, ծանօթ վիրաբիւղանդական և հայ արուեստին. բնագիրը ձեռագրական ոճով արտագրելու նեղութիւնը յանձն առաւ մի ուրիշ պարոն՝ ճեմարանի նախկին սան՝ պ. Լեռն Երամեան: Տպագրութիւնը կատարուած է Պետերբուրգում Գոլիկէ և Վիլլորդ նշանաւոր գործարանում պլրոփ. Մառի՝ խորին շնորհակալութեան արժանի՝ սիրալիք հակողութեամբ և կարդագրութեամբ: Նախատեսուած չէր, թէ տպագրութիւնը կարող էր այսքան ուշանալ. մասնագէտ անձանց վկայութեամբ հնարաւոր չէր աւելի կարճ ժամանակի ընթացքում կատարել այն, քան կատարուած է, իսկ մի անդամ սկսած գործը ընդհատել կարելի չէր, որքան և անյարմարութիւններ ծագէին անդրանիկ օրհնութեան կոնդակի հրատարակութեան յապաղմամբ: Այսօր Ա. Հայրապետի և Հոգևոր Տիրոջ օրհնութեան հետ՝ մաքուր և գեղեցիկ տպագրութեամբ՝ մատուցանւում է հայ ժողովրդին և գեղարուեստական մի գործ, մեր նախնեաց մանրանկարչական արուեստի ոճով և հետեղականութեամբ:

Ճակատի կեդրոնական պատկերը կազմուած է այսպէս. աջ կողմի (դիտողի) կամարի տակ ամբողջ հասակով կանգնած է Ս. Բարդուղիմէոս, իսկ ձախում Ա. Թաղէոս առաքեալը, երկուսն էլ մեր եկեղեցական աւանդութիւնների

համաձայն իրենց յատուկ նշանակներով։ Թաղէսս առաքեալը բռնել է գեղարդը, իսկ Բարդուղիմէսս Տիրամօր պատկերը։ Երկուսի մէջն է դաստառակը Փրկչի անձեռագործ պատկերով, որ դարձեալ մեր աւանդութիւնների համաձայն Տէրն ուղարկել է Արգար թագաւորին Թաղէսս առաքեալի ձեռքով։ Ներքեի խորանի տակ հայրապետական զգեստով կանգնած է Ս. Լուսաւորիչ։ Երեքի դէմքերն էլ առնուած են Մայր Աթոռի մատենագարանի արքայական ճաշոցից № 892, որ հայ մանրանկարչական արուեստի և պատկերագրութեան մի գլուխ գործոց է։ Լուսաւորչի աջ կողմն է Ս. Մասիս, իսկ ձախ կողմը Ս. Էջմիածինը։ Աւելի ներքե թեսարած հրեշտակը բռնել է հայրապետական նշանները՝ խաչն ու գաւազանն իրենց դրօշակներով, թագն ու կոնքեռը, եմիփորոնը։

Այս բոլորը իւր զարդարանքներով, ինչպէս և Ս. Հայրապետի անուանն և տիտղոսի գրերը, շրջանակները նկարագարդուած են մեր նախնեաց արուեստի հետևողականութեամբ կամ ճիշդ նմանութեամբ։ պ. Պոլտարացկին աշխատել է գաղափարի համեմատ ցոյց տրուած նիւթերը գասաւորել շարադրել, միանգամայն հաւատարիմ մնալով հայ արուեստի ոգուն, որով և այս գործը կարող է հայ մանրանկարչական արուեստի մի նմուշ լինել։ Մենք այստեղ կաշխատենք մանրամասնութեամբ ցոյց տալ այն տեղերը, որ տեղից առնուած են նիւթերը, որպէս զի ապագայի համար չկորչէ և կոնդակն ընթերցողի համար էլ պարզ լինի նորա զարդարչութիւնը։

Երկու առաքեալների և Լուսաւորչի դէմքերն առնուած են արքայական ճաշոցից՝ № 892, Բարդուղիմէսս առաքեալինը 10 ա (այնտեղ Յովհաննէս աւետարանչի անդրին), Թաղէսսինը 6 բ (այնտեղ Ս. Սահակ Պարթև ամբողջ հասակով), իսկ Լուսաւորչինը իւր իսկ անդրիից 122 բ։ Առաքեալների հագուստը պ. Պոլտարացկին ինքն է շարադրել, իսկ Լուսաւորչի զգեստը իւր բոլոր մասերով առնուած է Մ. Աթոռի աւանդատան զգեստներից։ Դաստառակը նկարիչն ինքն է շարադրել, աւանդութեան համաձայն, ինչ-

պէս և առաքեալների, Մայր Տաճարի և Մասսի դաշտանկարները, հետեւելով մեր մանրանկարչական արուեստի նման գործերին: Կեղրոնական պատկերի շրջանակի արտաքին կողմից՝ աջ և ձախ, ինչպէս և ճակատի խաչի հիմք կազմող զարդերն առնուած են արքայական ճաշոցից 211 թ., իսկ խաչը ներսէս կամբրոնացու համար գրուած և նկարազարդուած Նարեկից № 1561, 5 թ.: Երկու առաքեալների և դաստառակի խորաններն իրարից բաժանող, կարմիր և կապոյտ գծազարդուած տախտակները, ինչպէս և ամբողջ այս մեծ պատկերի հիմք կազմող, ներքին տախտակը, որի վրայ կանգնած են սիրամարդները, առաքեալների և կուսաւորչի զլիսի եռամասնեայ կամարների հետ, առնուած են արքայական ճաշոցից 6 թ., որոնք այնտեղ Ս. Պահակ Պարթեի պատկերի շրջանակի մասերն են և մակերեսութի (Փօնի) մեծ կամարը: Առաքեալների կամարների վերին անկիւնների, քառանկիւնի շրջանակից ներս, ծաղկազարդերը՝ իրար դէմ կանգնած զոյգ թռչուններով՝ առնուած են կամբրոնացու Նարեկի 5 թ. խորանազարդի անկիւններից, իսկ դաստառակի քառանկիւնի խորանի մակերեսոյթ կազմող երփներանդ զծազարդերը եռատերեններով՝ արքայական ճաշոցից 7 թ. սկսուածքի ճակատազարդից: Կուսաւորչի կամարի անկիւնների եռատերեններն ու հնգատերեւնները՝ իրենց ցօղուններից կազմուած հանգուցաւոր շրջանակներով՝ առնուած են կամբրոնացու Նարեկից, հաւանօրէն 117 թ. այստեղ փոքր ինչ փոխուած է, նոյնը չկար այնտեղ, թէև ամբողջ արուեստն ու ոճը Նարեկի նկարչինն է: Ներքեկի չորս սիւները, որոնց մէջ զետեղուած են Մասսի, կուսաւորչի և Ս. Էջմիածնի պատկերները, իրենց խարիսխներով՝ առնուած են կամբրոնացու Նարեկի 5 թ., 6 ա խորաններից, իսկ խոյակները՝ չորս աւետարանիչների նշանակներով՝ Յովհաննէս Երզնկացի բազմաշխատ վարդապետի գրած և Թորոսի նկարազարդած Եսայի Նչեցու Աստուածաշնչից № 182, 438 ա, 439 թ., 440 ա և 442 ա, ոյստեղից են առնուած և սիրամարդները 438 ա: Եսայի Նչեցու Աստուածաշնչի մէջ թառած է միայն մի սիրտ-

մարդ, աջ կողմից, բայց պ. Պոլտարացկին համաշավութիւնն պահելու համար աւելացրել է և միւս կողմի սիրամարդը. բացի գորանից սիրամարդի պարանոցի ծաղկաբարդը երփներանդ է դարձրել և աւելի ակնահաճոյ, այն ինչ այստեղ միազդն է ու կարմիր:

Հայրապետական նշանները, խաչն ու գաւազանը իրենց դրօշակներով, թագն ու կոնքեռը, եմիփորոնը նկարուած են բնականից, այսինքն Մ. Աթոռի աւանդատան զգեստներից, խել թեատրած հրեշտակը արքայական ճաշոցից 208 ա.

Այս վերին մասի արտաքին շրջանակը, ծայրերի չորս ծաղկապարզերով առնուած է արքայական ճաշոցից. բուն շրջանակը 6 ր, Սահակ Պարթեի շրջանակի մասերը, աջ կողմի ներքին ծայրի ծաղկապարդը 422 ր, քիչ փոխուած, վերին ծաղկապարդը 395 ր, ձախ կողմի ներքին ծաղկապարդը 855 ա, վերինը 431 ր, քիչ փոխած: Բնագրի շրջանակը աջ և ձախ կողմից առնուած է դարձեալ նոյն ճաշոցից 58 ր, վերին ծայրապարզերը 425 ա: Բնագրի շրջանակի ներքին կողը դարձեալ արքայական ճաշոցի 194 ր սկզբնապարդից, սափորը 7 ա, բացի միջի ծաղիկներից, որ նմանողութիւն է, երկու կողքի ոլորուած ծաղկապարզերը թռչուններով 6 ր, հետևեալ միւս զոյգը 159 ա:

Հայրապետի անուան և տիտղոսի առաջին տողը, երկրորդի «կթղկս» և չորրորդի «կջմիածնի» բառերը գրուած են արքայական ճաշոցի ոճով, բայց աւելի պարզած և փոքրացրած. աւելորդ ենք համարում ամէն մի տառի տեղը ցոյց տալ, քանի որ այստեղ միայն ընդհանուր նմանութիւնն է պահուած: Հայրապետի անուան առաջին տառը միայն՝ կազմուած չորս աւետարանիչների նշանակներից, առնուած է եսայի Նշեցու Աստուածաշնչի Մարկոսի սկզբնաւորութեան առաջին Ս տառից 463 ա, բայց Մ-ի ընորոշ մասը՝ բազուկը ձեռքին խաչ՝ կամբը նացու Նարեկի Զ տառից, 8 ա:

Տպագրուած կոնդակը մեծութեան կողմից բնագրի 2|5 է. այդ պատճառով էլ մի երկու փոքրիկ մանրամաս-

նութիւններ լաւ չեն դուքս եկել, որ առանց նկատողութեան ննք թողնում: Ընդհանուր առմամբ տպագրութիւնը ոչ միայն գոհացուցիչ է, այլ և շատ լաւ: Կոնդակի իսկականը, նկարագարգած պէտք է գրած պէտք է բամեանի ձեռքով, կպահուին հայրապետական գիւանում:

Այսպիսով տեսնում ենք, որ Ս. Հայրապետի անդրանիկ կոնդակի մանրանկարչութիւնն ու զարդարանքներն առնուած են կամ հետեւղականութիւն են մեր նախնեաց մանրանկարչական արուեստի ամենածաղկած շրջանի: Լամբրոնացու Նարեկը գրուած է 1176 (ՈՒԵ) թուին, զրիչն (երեխ և նկարիչը) է Գրիգոր, սքանչելի մանր երկաթագրով և քնքոյշ, ակնապարար ու հանգստացուցիչ մանրանկարչութեամբ: Արքայական ճաշոցը գրուած է 1286 (ԶԼԵ) թ., հրամանաւ «ածասէր և ամէնիմաստ բարեպաշտ և հանճարեղ պարոնին Հեթմոյ որդւոյ քուապսակ որ արքային Լևոնի», պատկերագրութեան, ճոխ զարդարանքների, երփներանգ և բազմատեսակ զրերի և առ հասարակ մանրանկարչական արուեստի բոլոր ճիւղերի կատարելութեան մի հարուստ շտեմարան, գարնան նման զուարթ և պայծառ հոգւով, հզօր, համարձակ, բազմակողմանի, իւր ուժերին զիտակից տաղանդաւոր մի նկարչի գործ: Երրորդը գրուած է 1318 (ԶԿԵ) թ., որ թէկ արուեստի կատարելութեան կողմից առաջին երկուսին հասնել չէ կարող, բայց նշանաւոր է հայ արուեստի պատմութեան համար իւր մանրանկարչական նիւթերի պէսպիսութեամբ և բնորոշ յատկութիւններով: Սորա գեղագիր զրիչն է Յովհաննէս Երզնկացին, մեր մատենագրական պատմութեան թանգագին անձնաւորութիւններից մէկը, իսկ նկարիչը Թորոս, երկուսն էլ եսայի Նշեցու աշակերտներ, որ զրել և զարդարել են այս ձեռագիրը իրենց մեծ ուսուցչի համար:

Թող, ուրեմն Ս. Հայրապետի այս կոնդակը նորա օրհնութեան հետ հայ ժողովրդին մի գաղափար տայ մեր նախնեաց նուրբ ճաշակի և արուեստի գեղեցկութեան մասին:

Գարեգին Պարդ. Յովովէփեան

Ա. էջմիածին